


ՄԻՈՒՆԻ ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹՒՆՆԵՐԸ

Ամերիկայէն նախանձախնդիր ազգային մը եկեղեցական-ձիաական կանոններու վերաբերեալ երեք հարցումներ կ'ուղղէ մեզ՝ լուսարանուելու համար, ի խրատ և յուզողութիւն այն եկեղեցականներուն՝ որ կ'անգիտանան անոնց մասին: Մենք իւրաքանչիւր հարցումին ստորև կը գրենք պատասխանը:

Ա.— Կրնա՞յ ո՛րեւէ պարզ վարդապետ մը կամ մէկ խօսնով արեղայ մը չարալ քաղով և գաւազանով պատարագել. — Վարդապետք երէ գաւազանի իխանութիւն սացած է կրնայ գաւազան ստնել թէ՛ պատարագի եւ թէ՛ քարոզի եւ կամ նանդեմեռու ժամանակ. իսկ երէ իխանութիւն չէ սացած, չէ կարող գաւազան կրել: Իսկ արեղան չի կրնար բնու գաւազան կրել. մինչևէ գաւազանի տուչութիւն՝ քանանայի նման կը պատարագէ: Չարալ քաղը Մ. Վարդապետք կը կրէ ա՛յն ասեմ, երբ վիճակաւոր առաջնորդ է:

Բ.— Կրնա՞յ վարդապետը տաղաւարներուն, այսինքն՝ Ծնունդի, Զատիկի եւլն. օրերը քարոզի ժամանակ Ս. Խորանի առջեւ արտ զնել ու նտոյ, ինչպէս որ եպիսկոպոսներ եւ պատրիարքներ կ'ընեն.— Պարզ վարդապետք, նոյն իսկ երէ առաջնորդ ըլլայ, քարոզի ժամանակ արտ չի կրնար նստիլ. միայն առաջնորդ եպիսկոպոսը արտօնեալ է: Իսկ պարզ եպիսկոպոսը արտ կը նստի ձեռնադրութեան ժամանակ:

Գ.— Կրնա՞յ վարդապետը կամ արեղան պատարագի ժամանակ քանի մը անգամ շուրջառ փոխել, քառ կամս.— Շուրջառ փոխելը կամայական սովորութիւն մ'է. չի զիջուիր թէ ի՛նչպէս մտեր է եկեղեցիին մէջ, երուսաղէմայ եկեղեցիին մէջ այդ սովորութիւնը գոյութիւն չունի. Ս. Պատարագի ժամանակ, երբ եպիսկոպոսը եմիփոսեմ-արտօնութեան կը հանել արտացոլութեմէ յառաջ, շուրջառը չի փոխեր, կը մնայ նոյնը: Պէտք է զգուշանան անոնք՝ որ անզխտութեմը կը հետեւին այս սեռակ զեղծումներու եւ զայրակողութիւն կը պատճառեն: Եկեղեցական նախանձախնդիր պէտք է ըլլան հայ եկեղեցւոյ կարգ ու կանոնին, եւ սրկար հանդիսեանան պարզափութեան:



ՆՈՐԶՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՆՈՐԳ

Ժողովուրդին ստասխնութեան համար շատ աշխատեցիք. պիտեմք համար՝ քաւական. իսկ հանոյքին համար՝ սակաւ:

*

Մենք չենք անկնար Աւետարանը ինչպիսի որ պիտէ հ, եւ զայն ուսանելու արգելք կը դնենք ձեզ զայն զիտեալ կարծիքիս:

*

Մարդերը կտուտարեալ համար սանձանուած իշխանը պարտի անկնար մարդերը:

Ս. ՅԱԿՈՒԹԻ ՆԵՐՍԷՆ

ԸՆՏՐԵԱԼ — ՊԱՏՐԻԱՐԻՔԻՆ
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ամեն. Տ. Թորգոմ Սրբ. Արքեպոս. Գիտակեանքի Ս. Արտոյս Պատրիարք ընտրուած ըլլալը հաղորդուած էր Պաղեստինի կառավարութեան, Նորին Վեհափառութիւն Թագաւոր կայսեր հաստատութիւնը ստանալու համար:

Յիշեալ հաղորդագրին ստացման առթիւ երուսաղէմի Փոխ-կառավարիչ Մր. Առլմանէ հետեւեալ պաշտօնագիրն ստացուած է:

(Թարգմանութիւն)

ՊԱՇՏՕՆԱՍՈՒՆ,
ՆԱՀԱՆՔԱՅԻՆ ԿՈՄԻՍԵՐՈՒԹԵԱՆ
ԵՐՈՒՍԱԿՂԷՄԻ ԲԱԺԻՆ
ԵՐՈՒՍԱԿՂԷՄ

Թիւ 9974|10|9 23 յուլիս 1931
Չերդ Գերապատութիւն,

Պատիւ ունիմ ակնարկելու Չեր Գերապատութեան 11042/15 համարու 17 յունիսի նամակին, եւ յայնմեղով թէ ինձի հրահանգուած է սեղեկագրել Չեր Գերապատութեան թէ Նորին Վսեմութիւնը (Քարճ Կոմիտերը) սացած է նոր Պատրիարքի մը ընտրութեան յաջող ընթացիկն սեղեկագիրը, եւ կը բաղնայ շնորհաւորել Պատրիարքարանի վարչութիւնը՝ Հայոց եկեղեցւոյ այդչափ ակնաւոր ներկայացուցիչ մը ընտրած ըլլալուն առիթով՝ երուսաղէմի Հայոց Պատրիարքի պատկառելի եւ կարեւոր պատճօնին համար:

Նորին Վսեմութիւնը գրելու վրայ է Պեսական Սեկրետերի (Secretary of State), սանալու համար Թորգոմ Արքեպիսկոպոսի ընտրութեան հաստատութիւնը՝ Նորին Վեհափառութիւն Թագաւորին կողմէ:

Պատիւ ունիմ ըլլալու
Չեր Գերապատութեան ննազանդ ծառան
Գ. ՍՈՒԼՄԱՆ

Փոխ-Նամակային Կոմիտեր
Երուսաղէմի Բաժին

Նորին Գերապատութիւն
Տեղապահ Հայոց Պատրիարքարանի
ԵՐՈՒՍԱԿՂԷՄ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Զ Ա Յ Տ Օ Ն Ը

Սրբոց Թարգմանցաց Սահակայ և Մեծարդայ ճօնին առթիւ գրական հանդէս մը տեղի ունեցուած ժողովուրդային Վարժարանի սրահին մէջ: Հանդէսը մտաւորական հանգամանք ունենալով՝ ժողովրդական բազմութեան փոխարէն մտաւորականներու եւ զպրոցականներու կողմէ գրուած էր սրահը:

Նախագահեց Տ. Մկրտիչ Սրբազան Ազաւետեան: Կարգաւ խօսեցան՝ կարճ կերպով, Տ. Կիրեղ վարդապետ, որու նիւթն էր՝ Գրի Գիւտին հրաշալիքը: Տ. Նորայր վարդապետինն էր՝ Աստուածաշունչի Թարգմանութիւնը: Տ. Տէրան

վարդապետ Ս. Մալխոզը ներկայացուց իրբև Գրխատունեայ Սուգրբը: Տ. Սիւն վարդապետ ծանրացաւ Գրի Գրխտին պատճառներուն եւ արգիւնքներուն վրայ: Իսկ Տ. Չգօն վարդապետ, գրբի գրխտին, իրբև քրխտունէական գործ, թուեց նայ ազգին պահպանման բերած նպաստները:

Ընծայարանի ուսանողներէն Տիր. Ղազարոս Սարկաւագ կարգաց թարգմանիչներուն ուղղեալ գեղեցիկ ներբող մը: Եղան նաև արտասանութիւններ՝ Ժառ. Վարժարանի աշակերտներէն Պ. Պ. Արշակ Դալսուտեանի եւ կարապետ Քննուկեանի կողմէ, եւ Սրբոց Թարգմանչաց Վարժարանէն՝ Օր. Վ. Տէօքմէնեանի եւ Պր. Թ. Յովհաննէնեանի կողմէ:

Նախագահ Սրբազանը փակման խօսքն ըբու, ծանրանալով մտքի մշակներուն գնահատութեան պէտքին վրայ:

Թէև քիչ մը երկար՝ բայց մեր ազգին երկու Մեծ Վաստակաւորներուն յարգանք մ'ըբած ըլլալու գօհունակութեամբ մեկնեցան հանդիսականները, գրբի գրխտի արժէքին մասին նորոգուած զգացումներով:

ԳՊՐՈՅԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընծայարանի, Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ս. Թարգմանչաց Վարժարանի քննութիւնները, ըստ սովորականին սկսան յուլիս 16-ին եւ վերջացան 26-ին:

Բերանացի քննութեանց ներկայ գտնուեցան Տեղապահ Սրբազանը, Մխարանութեան անդամներ եւ ուրիշ հիւրեր:

Դպրոցական տարւոյն աշխատութեանց արգիւնքն ըստ ամենայնի յաջող էր եւ քննիչներու մեծ գօհունակութիւն պատճառեց: Դպրոցաց Տեսուչ Նոգ. Տ. կիրեղ Վարդապետ եւ ուսուցիչներ ամէն ջանք թափած էին իրենց կարելի լաւագոյնը ընելու, եւ փայլուն գործ մը կատարելու համար: Ուսանող աշակերտներու ալ ջանասիրութիւնը գնահատելի էր ամէն կերպով:

Այս տարի դպրոցական ընթացքի մէջ մըտցուած նոր նիւթերէն մասնաւորապէս գնահատութեան արժանի եղան Պաղեստինի հնագիտութեան դասը եւ Ժառ. սաներու իւզանկարի փորձերը, որոնցմէ ոմանք շատ յաջող էին:

ԱՄՈՎԵՐՋԻ ՀԱՆԻՒՆ

Սրբոց Թարգմանչաց Վարժարանի եւ Մանկապարտէզի ամալըբլի Հանդէսը տեղի ունեցաւ 26 յուլիսին, նախագահութեամբ Տեղապահ Սրբազան Չօր:

Մանկապարտէզի պղտիկներուն եւ Նախա-

կըթարանի աշակերտներուն կողմէ եղան արտասանութիւններ, որոնց մէջ կային նաև անգլիերէն եւ արաբերէն կտորներ:

Շատ գեղեցիկ եւ հանելի էին մասնաւորապէս Մանկապարտէզի խաղերն ու մարզանքները, զորս կատարեցին հրեշտակային համազգեստներ հագած սիրուն պղտիկները:

Եղան նաև պատշաճ ուղերձներ, եւ խօսք՝ Տեսուչին կողմէ:

Հանդէսին յայտագրին վերջանալէն յետոյ տեղի ունեցաւ Վարժարանի Վիճակահանութիւնը 200 գեղեցիկ եւ արժէքաւոր կտորներու համար (1000 տոմսակներու վրայ), զորս Ս. Թարգմանչաց սանուհիները գործած էին տարուան ընթացքին: Նախորդ տարիներու վրայ նոր առաւելութիւն մը կը ներկայացնէին այս տարուան կարգ մը հաշակաւոր ձեռագործները՝ իւզաներկով եւ սկիզբօծուածով կատարուած:

Դժբխտարար Ժառանգաւորաց սրահը փոքր եկած էր խառն բաղմուքեան համար, եւ շատ մը յարգոյ ազգայիններ ստիպուեցան ետ դառնալ եւ զրկուեցան ժամեր տեղող այս թանկագին վայելքէն, որ մինեռոյն ատեն միջոց մըն էր իրենց՝ տեսնելու Վարժարանի եւ Մանկապարտէզի վարչութեան կատարած աշխատանքները:

Որպէտզի սակայն չզրկուին հանդէսին առթած հաճօքէն անոնք՝ որոնք ներկայ չկրցան ըլլալ 26 յուլիսին, պէտք տեսնուեցաւ կրկնել զայն, կարգ մը երկար մատերու գեղջուամով, օգ. 2-ին կիրակի օրը, այս անգամ սակայն Վարժարանի բակին մէջ, ուր օղը զով եւ տեղը ընդարձակ ըլլալով՝ հանդիսագրութիւնը լիովին հասաւ ի նպատակին:

Յայտագրին լրանալէն ետք՝ կատարուեցաւ անցած դպրոցական տարուան ընթացքին աշխատասիրութեան եւ յառաջգիտութեան մէջ առաջնորդութիւն շահած Ս. Թարգմանչաց Վարժարանի աշակերտներուն մրցանակարաշխութիւնը, Տեղապահ Սրբազան Չօր ձեռամբ:

Ատկէ ետք տեղի ունեցաւ Վարժարանի Հայ Արիներու գրօշի տըլութիւնը, օրհնութեամբ նախագահ Սրբազանին:

Սրբոց Թարգմանչաց Հայ Արիները Պաղեստինի 20րդ սկսուտական խումըը կը կազմեն, եւ կազմակերպուեցան վերջերս, Վարժարանի երիտասարդ ուսուցիչներէն Պր. Պեր Տարազնեանի ջանքերուն շնորհիւ, որուն եռանդն ու աշխատասիրութիւնը այս գործին մէջ՝ ամէն գնահատութեան իրապէս արժանի է:

Գրօշի տըլութիւնէն ետք խումըը կատարեց խաղեր, զանազան սեսակ բուրգեր շինելով, որոնք ծափահարուեցան ներկաներուն կողմէ:

Հանդիսականները մեկնեցան շնորհակալութեամբ եւ լաւագոյն տրամագրութիւններով հանդէպ Ս. Աթոռին, որուն վրայ կը ծանրանայ Վարժարաններու ամբողջ հոգը, եւ Տեսուչ կիրեղ Վարդապետին՝ որ իր կարելին չխնայեց անցած տարւոյն ընթացքին՝ Վարժարանները լաւագոյն արգիւնաւորութեան մը մէջ զնելու համար:

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՕՆԸ

Ըստ Հին Տօմարի յուլիս 19-ին կը հանդիպի Վարզաժամի քրիստոնէական մեծ տօնը, որ հայկական յիշատակներով ալ զուգորդուած է:

Այդ օր Ս. Յակոբեանց Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց Գեր. Տ. Մկրտիչ Սրբ. եպօ. Ազաւնունի, բնարան ունենալով Այլակերպութեան Լերան վրայ Տեառն մերոյ քրիստոսի խօսքերէն այտան կացէք եւ մի՛ երկնջիք»:

Ջուր սրսկիլու հեթանոսական սովորութիւնն ալ քրիստոնէական իմաստով մը՝ կը պահուի Սուրբ Երուսաղէմի Հայոց վանքին մէջ, եւ Անդատանի Աւետարանին աստե՛ն վարդապետ մը ունենի փունջով մը վարդի ջուր կը սրսկէ առանձին առանձին Դասի մէջ գտնուող եկեղեցականներուն, և յետոյ յուսարարը նոյնը կ'ընէ ժողովուրդին, ինչպէս արդէն նկարագրուած է 1928 տարուայ Սլոն-ի օգոստոսեպտ. թիւին մէջ:

ԿԻԻԼՊԷՆԿԱՆ ՄԱՍՏԵՆԱԴԱՐԱՆ

Երջանկայիշատակ Դուրեան Պատրիարքի Յօրելեանի առթիւ եղած նուիրատուութեամբ կառուցուած Կիւլպէնկեան Մասեճուարանին շինութիւնը բոլորովին աւարտած է, և երջանկայիշատակ Տ. Եկիշէ Դուրեան պատրիարքի գիրքերը ամբողջութեամբ փոխադրուած են, իսկ վանքի գիրքերն ալ հետզհետէ պիտի փոխադրուին գեղեցիկ և արդիական այս շէնքին մէջ, որ ուսումնասիրութեան և մտաւորական աշխատանքի մեծ դիւրութիւն պիտի ընծայէ Միաբանութեան և Ընծայարանի ուսանողութեան:

Պաշտօնական բացումը տեղի պիտի ունենայ Ս. Աթոռոյ նորընտիր Պատրիարքին գահակալութեանէն ետք:

ՄՇԵՅԻ ԼԱՐԱՆԱՂԱՅ ՄԸ
ԵՐՈՒՍԱՂԱՄԻ ՄԷՋ

Նախորդ ամսուն (յունիս) 28-ին, Երուսաղէմ եկած Մշեցի Պր. Դրիգոր Աւագեան լարախօյի ներկայացում մը տուաւ ժառանգաւորաց Վարժարանի բակին մէջ, և տեղւոյս հայութեան հետաքրքրական և բնատուրիկ յիշատակներ արթնցնող վայելք մը պատճառեց, կատարելով զանազան խիտ նարպիկ և դժուարին խաղեր:

Այս ներկայացումը այստեղ կ'արձանագրենք անոր համար որ գաւառացի հայուն, մանաւանդ Տարօնցիին համար լարախօյը կրօնական հանգամանք մը ունեցած է կարծես: Անա՛ր քանի մը տողեր ընհատակ Գրագէտներու Բարեկամներու վերջերս հրատարակած Գեղամ Տէր Կարապետեանի «Տարօնի Աշխարհ» գործէն: —

«Փէհլիօն», էջ աղամորդին իջեմը թէ Լազա՛նց է որ կանփէ թելին վրայ կը խաղայ, կ'ընէր մէկն: — Վերին իծու — ստանի մաղ կայ հե-

տը, կը նկատէր ուրիշ մը: — Յիսուս Քրիստո՛ս, ձէն կուտար սպիտակ վարս կին մը, տարուհներ, զես չէք դիտեր — մեռնիմ իր սուրբ զօրութեանին՝ Ս. Կարապետին հուճարոյն է...»:

Նաև, այն հոյակապ եօթն անուան տէր Սուրբը որ ... հուճար կը պարզէ՛ւ աւուրներուն, փէնիլվաններուն նախ-խորաններուն, որք տօնական օրեր իր մուրատատուր դարկեանը գալով, եւ ցոյց զնելով՝ իրենց շնորհը կը կանչեն, կը զօրասանեն զինքն, իր բարձրիկ գմէթներն, մարմար գերեզմանը և խնկելի տաճարը»:

Վերջապէս Դեղամի լարախօյացիներու նկարագրութիւնը ամբողջութեամբ կը պատշաճէր Երուսաղէմի դաղութին համար ցոյց զնոց՝ այս լարախօյացին ալ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

Յ Երուսաղէմի Աւետարական Սենեակի Նախագահ Մր. Էլիպառ Շէլիի ծննդեան եօթանասունամեամին առթիւ, յուլիս 9-ին, քաղաքիս Պալատ Պանդոկին մէջ տրուեցաւ թէյասեղան մը, որուն ներկայ գտնուեցան Պատրիարքարանիս կողմանէ Հոգ. Տ. Կիւրեղ և Ա. Թարգման Հոգ. Տ. Պարզե Վարդապետները:

Յ Յրանսական Ազգային Ջօնի տարեգարձին առթիւ, Պատր. Տեղապահ Սրբազան, հետն ունենալով Ս. Աթոռոյս Դիւանապետը, յուլիս 14-ին շնորհաւորական այցելութիւն մը տուաւ քաղաքիս Դաղիական Պ. Ընդհ. Հիւպատոսին:

Յ Եգիպտարնակ Լիբանանցի յայտնի Քաճասեղծ Խալիլ Պէյ Մուրաճի տեղս այցելութեան առթիւ ի պատիւ իրեն թէյասեղան մը տրուեցաւ Երուսաղէմի Քաղաքապետի Օգնական Ֆարի Պէյ Նէշաշիպի կողմէ՝ իր բնակարանին մէջ, յուլիս 18-ին:

Պատր. Տեղապահ Սրբազանը, հետն ունենալով Ս. Աթոռոյս Դիւանապետը, ներկայ գրտնուեցաւ տոյն թէյասեղանին:

Յ Պատր. Տեղապահ Սրբազան, հետն ունենալով Պատրիարքարանին Դիւանապետը, յուլիս 21-ին կ'էսորէ ետք ներկայ գտնուեցաւ Պալեստինի Վսեմ. Բարձր Կոմիսերի սպարանքին մէջ տրուած թէյասեղանին:

Յ Եթովպիոյ Վ.Ս. Հայլե Սելլամէ կայսեր ծննդեան տարեգարձին առթիւ՝ Պատր. Տեղապահ Սրբազան, հետն ունենալով Ս. Աթոռոյս Ա. Թարգման Տ. Պարզե Վարդապետը, յուլիս 23-ին շնորհաւորական այցելութիւն տուաւ քաղաքիս Եթովպական Պ. Հիւպատոսին: